

ՄԱՍԻՔ

(Տիւ յ'էջ 385)

Նոյն ինքն Պրայս թէպէտ և Մասիսի համար կ'ըսէ թէ զուրկ է շատ բարեմասնութիւններէ, սակայն վրայ կը բերէ բսելով, յօ է « Արարատայ մէջ (Մասեաց վրայ) զանազան մասունքն ազնուազոյն չեն, այլ բոլորն ու բովանդակն: Այնպիսի վիթխարի և միանգամայն շնորհագեղ զանգուածի մը երևոյթ՝ երբեք չեմ տեսած, ինչպէս այս լեռն կը տեսնուի չըջակայ դաշտերէն. և չկայ այլ տեսարան մի որ իրեն հանդիսատեսը մեծութեան և ընդարձակութեան այնքան խորին ըզգացմամբ լեցընէ, ինչպէս և թէ մէկն այս լեռանս վրայ ելնելով և դիտելով ստորին կողմերը և միանգամայն անթիւ բազմութիւն մը լեռնակայ կը տեսնէ, որք ասդին անդին սփռուած են: Դարձեալ, անոր թէ ձևոյն և թէ գունոյն պարզութիւնն կամ միակերպութիւնն կ'առաւելուն անոր վեհ վսեմութիւնը. այցելութիւն աչքերն զանազան քննելի իրաց վրայ չեն դառնար, այլ միայն հսկայակոյտ ձիւնապատ գագաթան վրայ կ'ուղղուին, որ ըստ բաւականի ուղիղ և խորտուբորտ ըլլալով, վերին կողմը գեղեցիկ կերպարանք մը կ'առնու, մինչդեռ լայնանիստ ստորոտն և բարաժայտ կողերն վսեմ ամբուլթիւն մը կու տան լեռանս: Զևոյն համեմատ գոյնն ալ պարզ է: Հակեալ պատուանդանէն, որ սովորաբար սպիտակայոյն է, կանաչորակ գօտուով 5000' տարածութեամբ սեպած և կողք վեր կը բարձրանան, որք բազադրեալ են հրաբխային աւազէ և ՚ի մտխոյ. այս գօտուոյն վրայ կայ մի այլ գօտի թխագոյն հրաբխային ժայռերէ ձևացած խառն ձիւնեղէն հիւսուածովք. իսկ ամենուն վրայ կանգնուած է արծաթափայլ գագաթն: Մէկ ակարկուլութեամբ միայն աչք մարդոյ կը տեսնեն միանգամայն այս ամէն գօտիները՝ որք կլիմայով և բուսաբերութեամբ զանազանեալ են յիրերաց, խոշակահար դաշտէն մինչև սառու ծածկուած գագաթը, որ ուղիղ վեր կը բարձրանայ գրեթէ 14,000 սանաչափ: Երկրիս վրայ գրեթէ անկարելի է ուրիշ տեղ մը գտնել յորում այսքան բարձրութեամբ գագաթ մը (17,000' անգղ.) այսպէս յանկարծօրէն վեր բարձրացած ըլլայ այնպիսի ցած դաշտէ (2-3000' ծովու երեսէն), և այս պատճառաւ հազիւ կրնայ որ դիտել այսպիսի վեհ և վսեմ երևոյթ մը»: — Ոչ ինչ պակաս քան զայս՝ ուրիշ ականատես այցելուաց այլ շատ գեղեցկատես երևցած է հեռուէն այս լեռս, այնպէս որ Մորիէ խտտագատ ըլլալովն հանդերձ՝ այսպէս կ'ըսէ՝ տեսնելով զայն՝ Նախճաւանի սահմաններէն. « Ասոր ձևոյն պէս գեղեցիկ, և բարձրութեանը նման՝ ա

հաւոր բան չկայ . հօն ամենայն ինչ ներդաշնակ և համեմատական է, և ամէն բան կը միաբանի բնութեան վսեմագոյն առարկաներէն մին կազմելու » : Գէր — Բորզըր կ'ըսէ, թէ անկարելի է այս լեռանս տեսեան վսեմութիւնը նկարագրել՝ երկու վիճակաց մէջ ալ, այսինքն ՚ի մըրկի և ՚ի հանդարտութեան օգոց : Գարձեալ, Արագածոտան կողմերէն գալու ատեն տեսնելով զայն՝ այսպէս կը գրէ . « Դեպ ՚ի վար իջնելու ատեն բացուելով մեր աչաց առջև հովիտն, խելքս միաքս իմ՝ առջևս եղած տեսարանին դարձաւ . ընդարձակ դաշտ մը անհամար գիւղերով, աշտարակք և լճմիածնի եկեղեցոյն կաթողիկէք՝ որք այն գիւղից մէջէն վեր բարձրացած են, էրասխայ փայլուն ալիքներն՝ որք նոյն հովտին մարգագետիններուն մէջէն կը վազեն, և նախաջրհեղեղեան աշխարհի ահաւոր մահարձանին ստորոտին չորս կողմը բարձրացած ստորակարգ պար լեռանց, մինչդեռ կարծես թէ այն մահարձանը ոտքի վրայ կանգուն կեցած է իբրև պանչելի հանգոյց մը մարդկային ազգի պատմութեան, որ ջրհեղեղէն առաջ և յետոյ եղած ազգերը կը միացնէ : Եւ երբոր տափարակ գաշտը հասայ՝ այն ատեն տեսայ զԱրարատ անոր մեծութեան բովանդակ ընդարձակութեամբն . իմ կեցած տեղէս այնպէս կ'երևէր, իբր թէ աշխարհիս մեծամեծ լերինք միատեղ գալով ձևացուցեր կանգներ են հողոյ, ձևան, քարի, այս վսեմ ամբառութիւնը . երկրագաթն լեռանըս սառով պատած ծայրերն՝ վեհ կերպով մը վեր կը բարձրանային դէպ ՚ի պայծառ և անամպ երկինս . պայծառ արեգակն անոց վրայ կը շողար, և անոր ճառագայթից անդրագործ ցոլացմամբն կարծես թէ ուրիշ նման արեգակունք ալ ձևացեր էին : Տեսարանին այս կէտը՝ դաշտին և բարձրութեան գերագոյն մեծութիւնը կը միացնէր : Իսկ այս լեռս զիտելու ատեն սրախ մէջ յառաջ եկած զգացմունքը՝ չեմ կրնար բացատրել՝ աչքերս չկարենալով զիտել գագաթանց ճառագայթարձակ փառքը, անսպառելի կարծուած կողերուն վրայ կը դառնային, մինչև որ հորիզոնին մտախլով աներևոյթ կ'ըլլային աւնոնց զիծերն ալ : Եւ ահա անդիմադրելի մղում մը մէկէն աչքերս վեր դարձուց և Արարատայ ահաւոր պայծառութեան վրայ հաստատեց զանո՛րք, և նուազեալ հայեցողականիս շուարած զգացումն՝ նոյն վիճակի մէջ դանուզ մտացս զգացման հետեւելով, սակաւ մի ժամանակ խորհելու կարողութիւնս դադրեցուցին պանչելի դարմամբ » :

Գէր — Բորզըրի հայրենակից Ուիլյարեհիմ տեսնելով զՄասիս արեգական մտից ատեն, կը գրէ . « Հագիւ թէ արեգակը խոնարհեցաւ և մտաւ, և Արարատ պայծառափայլ երկնից մթազոյն ենթակային վրայ կանգնուած էր, լեռը ծիրանեղոյն փայլուն գեղեցկութիւն մի կ'առնուր, և ձիւնապատ գագաթն ալ միակերպ զանգուածէն չէր որսչուէր : Այ՛ն Արարատէն աւելի բարձր լեռներ տեսած էի, բայց ասոր

մեծ երևոյթն, և Երասխայ ընդարձակ դաշտէն ուղղակի ազատ վերամբարձումն, Սրբազան պատմութեան զօրաւոր հրապոյրքն, հիացումն և երկիւղ մը յառաջ կը բերեն մարդու վրայ » :


Բաղինսըն անդգիացի մեծ աշխարհագէտ և պատմագէտ զօրագետն ալ՝ աշխարհագրաց ժողովոյն մէջ յամի 1878 ատենարանելով, թէպէտ և կ'ուրանար Մասիսի տապանակիր ըլլալն, բայց կը խոստովանէր թէ « այս լեռը կարի յոյժ գեղեցիկ և ձգիչ է, և չեմ գիտեր թէ արդեօք Արարատայ ամպեղէն բակովն և ձիւնապատ գագաթովն տեսարանէն զատ՝ կայ մի այլ տեսարան, որ և գէթ հարիւր մղոն հեռաւորութենէ կրնայ տեսնուիլ » : — Այս վերոյիշեալ անձանց հայրենակից Ֆրէշֆիլդս որ Մասեաց վրայ յետին գրօսասէր ելլողներէն մին է, վերնոյն պէս 'ի բայ թողլով լեռանս տապանակիր ըլլալուն քննութիւնը՝ համառօտիւ կը գրէ : « Աւանդութիւնն՝ առանց տարակուսելու ամենապատշաճ պատուանդանի վրայ հաստատեց նոյեան տապանը » : Ուրիշ եռանդուն փռանկ նոր աշխարհագիր մ'ալ Ուելսի մնա վերոյիշելոց հետ Մասեաց տապանակիր ըլլալը չընդունելով կ'ըսէ, թէ արդէն այս լեռը կարօտութիւն չունի յիշատակաց, վե՛հ և վե՛հ մ'ըլլալու համար. քիչ յերկնք կան որ ասոր վե՛հ կերպարանքը ունենան » : — Վլակիւնթր բնագէտն որ երկրիս երեք մասանց մեծամեծ լեռներէ քննած էր, կ'ըսէ, թէ Արարատայ երևոյթն մեծատեսիլ է քան թէ ուրիշ լեռանց, վասն զի թէպէտ և էլպրուզ բարձր է քան զԱրարատ իբր 2000 ոտնաչափ, բայց կովկասեան լեռանց շղթային մէջէն վեր բարձրանալով, չափց վրայ մեծ տպաւորութիւն կամ ազդեցութիւն չընէր, մինչդեռ Արարատ միայնակ է դաշտի մէջ, և մշտնջենաւոր սառամանեօք ծածկուած է մինչև ցկէտն : — Դեւիլէ գաղղիացի, Անուոյ աւերակաց պատկերահանն, Տիատինէն 'ի Պայէզիտ գալու ատեն զՄասիս դիտակաւ դիտելով, այսպէս կը գրէ. « Այս լեռանս վրայ խօսող ճանապարհորդաց և ոչ մին կրցաւ թողուլ զանց ընել բացատրելու նոյն լեռան երևութիւն իրենց վրայ ըրած զօրաւոր տըպաւորութիւնը : Չնոյն ուղղութիւնը, չըջակայ լեռներէն անջատ միայնութիւնը՝ զայն բարձրագոյն կերեկնեն քան զոր է : Երկնից պայծառ յտակութիւնն կը ներէր մեզի լեռան գագաթան տեսարանը վայելելու, զոր հեռացոյց դիտակով կը գննէինք, և որոշ կերպով երեք պզտիկ կոնոնք կը տեսնուէին որք կարծես թէ խառնարանին եզերաց վրայ հաստատեալ էին : Լեռան կազմութիւնը ուրիշ լեռնագօտեաց նման խառ խառ յատակ չունի, այլ կոնին ամբողջ երեսը խանձից հեղմամբ ծածկեալ է, որք յայտնապէս գագաթէն բղխեր են » :

Ուրիշ շատեր այս վերոյիշելոց նման՝ կերպով մը անհրաժարելի պարտք կը համարին իրենց՝ մեր Մասեաց վրայ զանազան զարմացական կամ դրուատական բաներ գրելու. և նոյն իսկ անոնք որ հա-

ընանցի կերպով միայն կը յիշատակեն զայն՝ անվրէպ կը զնեն հետեւեալ մակդրաց մին, մեծ, վսեմակալ, ազկիւ, ւսնւմասն, և այլն, և կը յիշեն միանգամայն ասոր միւս բարձրագոյն լեռներէն աւելի ունեցած գերազանցութեան պատճառը: Օրինակի համար խարխալ Գիլգալա լեռան որ հաւասար է Մասեաց, 7000՝ բարձր է. Չիմպուրասոյ՝ գրեթէ 20,000՝, իսկ բարձրաւանդակն՝ գրեթէ կէսն է. և եթէ Ալպեանց մէջ գանուին դիրքեր՝ ուսկից երևնան ուղիղ բարձրութեամբ լեռներ մինչև 44 կամ 42,000՝, բայց անոնց քով ուրիշ բարձր լեռներ ալ կան, և միայն հօտի մը կողմանէ այնպէս ուղղաբերձ կերևին. « իսկ հօս ի Հայս, կրտ վերոյիշեալն Մորիւ, այս լեռը միայն ալ վսեմ կերպով մը վեր կը բարձրանայ ընդարձակ և մեծ գաշտին մէջէն »: Գամերուս Բուշիւ անդղիացի գնդապետին խօսքերովն կրեմք այս դիտողութիւնքը, որ յամի 1836 առաջին անգամ տեսնելով զՄասիս սրանչացած էր, իսկ երկրորդ անգամուն յամի 1838, ՚ի սկիզբն մայիսի) ՚ի Նախճաւանայ յերևան երթալու ատեն այսպէս կը գրէ. « Գարձեալ նոյն վսեմական տեպեան հանդիպեցայ տեսիլ Սրարատայ. այ՛ չափ մեծ է և այնքան ահեղ, որ ասոր հետ որ և իցէ մեծամեծ և յանկուցիչ առարկայք բազդատուելով՝ անըզան բաներ են. անցորդին՝ կրօնական և պատմական զգայմանց հետ, որովք նա Արարչին այս սքանչելի գործը կը գիտէ, ամենայն ինչ կը միաբանի անոր մտաց մէջ և անով այս լեռը երկրագնախ վրայ քան զամենայն առարկայս վեհագոյն կ'ըլլայ »:

Ինչպէս բուն Մասեաց երեւոյթն կրկին է, խոշոր ըստ աչաց, իսկ վսեմ՝ իւր միայնակ բարձրութեամբն, այսպէս է նաև անոր գագաթէն տեսնուած տեղեաց երեւոյթն. վասն զի իւր բարձրութեան համեմատ հարկ էր հետագիտակ ըլլալ և վսեմացոյց, բայց ՚ի հակառակէն անոր անհամեմատ բարձրութիւնն քան զվերձաւոր լեռինս, չորս կողմի տեսարանին մեծութիւնը կը նուազեցնէ. վասն զի շրջակայ առարկայք ընդարձակ գաշտին վրայ փոքր և խառնակ կ'երևին, և ոչ թէ վեհ և մեծ: Իսկ մեծամեծ առարկաներ տեսնելու համար աչաց զօրութիւնն անբաւական է, այսինքն գիտելու մինչև կովկասու և Տարուսի շղթայքը, Պանոսի և կազբից ծովերն. կամ թէ ըսնը՝ Մասեաց վրայ ենտղներէն ոչ որ կը յիշէ թէ այսպիսի բաներ տեսած ըլլայ որոշ կերպով: Բայց Պրայս անառարակոյս տեսաւ կովկասու հարաւային գօտին, այն է բուն լեռնաստանը (Տաղստան) զի տելով զայն 150 մղոն հեռուէն, Գեղամայ լեռանց և ծովու ուղղութեամբ հիւսիս-արևելեան կողմէն, և այս ծովու հարթ հաւասար մակերեսոյթն ալ պոյժառ կը տեսնուէր. նոյնպէս նաև յամի 1850 խոյճքոյի երկրաչափական քննութեանց ատեն, այս տեղէս տեսնուեցաւ կովկասու կոտորէպի բարձրաչափութեան դիտանոցն կամ նշանակն, որ 140 մղոնէն աւելի հեռու է: Հիւսիսային կողմանց մեր-

ձակայ տեղերն ալ կ'երևէին, նահանգն էրևանայ, և Երասխ՝ որ իբրև արծաթէ մանեակ մ'է նահանգիս, Արագած չորս ձիւնապատ գագաթներով, Սնույ, Կիւմրոյ և Կարուց սահմանքն. իսկ արևմտեան կողմէն՝ ամպերով ծածկեալ բարձր Հայոց և Տաւրոսի լեռանց տեսութիւնը կարգելուր. հարաւայլին կողմէն կ'երևնար սրագագաթն Սիփան, և աւելի հեռուն Սաւալան բարձր լեռը, և դեռ աւելի հեռուն՝ Կորդուաց և Քաղզէացուց լեռանց գագաթներն կ'երևէին:



Մասիս և ձիւնապատ արևելեց, ըստ Խոյբրոյի:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ, ՆԻ ԱՆՈՒՆ. — Սակայն այս ամենայն, և եթէ դեռ ևս Մասեայ գագաթէն ուրիշ բաներ ալ երևնան, և նոյն իսկ ուրիշ յարմարագոյն լեռանց հրաշալի տեսարանքն ևս՝ իբր ոչինչ մ'են

այն յիշատակաց քով զորս կը զարթոցանէ մեր մտաց մէջ այս լե-
ռը, և ասով յայն զայլ ամենայն լերինս վեհագոյն է. և է այն՝ Զրհեղե-
զի և մարդկան երկրորդ վերածնութեան յիշատակն, որով այս
լեռը մարդկանց որբանք համարուած է: Եւ թէպէտ կորդուաց լե-
րինք ալ այս մասիս մէջ կրնան ըստ բաւականի զօրաւոր փաստիւք
մրցիլ և թերեւ յաղթել ալ Մասեաց, բայց այս Մասեաց սեփակա-
նութեան կարծիքն այնպէս տողորուած է ընդհանուր մարդկան մտաց
մէջ, որ գրեթէ անկարելի է այս կրկին իմաստները իրարմէ զատել,
այսինքն, Մասեաց կամ Արարատեան լերինք և Զրհեղեզ. դիտունն
և տգէտ, յրիստոնեայ կամ ոչ, այս յիշատակաւ լերանս դազաթան
վրայ կը նայի և յերկիր կը խոնարհի¹: Այսպէս նաև նրբամիտ բանա-
ստեղծն Նարեկացի, անօրէնութեանց և արդարութեան կշռոյն անբա-
ւաշափ քանակիչ կամ կշռորդ չէր կրնար գտնել քան « զլեռուն Արա-
րատեան ՚ի կէտ ամբարձման նժարի միջոյ արդարութեան »: Միով
բանիւ, ինչպէս որ մեր երկրին մէջ չկայ գրաւիչ մեծագոյն անհատ
մի, այսպէս ալ չիք հօն մեծագոյն գրաւիչ մը օտարներուն մտաց
քան զԱրարատ:

Ներկայ դարուս մէջ նշանաւոր եղաւ Մասիք քաղաքական տեսու-
թեամբ ալ, վասն զի իւր կոթողակերպ հասակին համեմատ սահմա-
նաքար եղաւ երեք տէրութեանց, Թուրքաց, Ռուսաց և Պարսից:
Վեյերորդ գարուն վերջերն ալ նոյնպէս եղած էր Յունաց և Պարսից
ինքնակալութեանց, վասն զի խոտրով Ապրուէզ Սասանեան՝ Հայաս-
տանի մեծ մասը Յունաց թողլով, իրեն պահէց զՄասիս և զԱրագած-
տան: Աւելի պրանչելի է Արարատեան լերանց միջակայութիւնն կամ
կեդրոնութիւնն հին երկրի երեսաց վրայ, ուստի Հումբոլտ զա-
րուս երկրագիտաց գլուխն՝ ըսաւ թէ սա կեդրոն ծանրութեան է
կովկասու հետ, որովհետեւ գրեթէ հաւասարապէս այն գծից մէջ
կ'իյնայ, որք ձգուած են Պէհերինկայ նեղուցին և Բարեյուսոյ գլխոյն,
Ատլանտեան և Խաղաղական ուկրանոսաց, Իսլանտիոյ և Հնդկաց
հարաւային ծայրից, Սենեկալի Ափրիկոյ և Բեքինայ Չինաց մէջ, և
այս պատճառաւ շատ ուղղագաւ անձինք յարմարագոյն կը դատեն
ըսել թէ Արարատ ըլլայ խանձարուրը կամ արձակարան մարդկու-
թեան երկրիս վրայ, քան թէ Դիպեթայ կամ Հնդկաց լերինքն, ինչ-
պէս ոմանք կը համարին:

Այս լերանս պատմական յիշատակներն, ինչպէս որ յայտնի է,
մինչև ցըրհեղեզ կը հասնին ըստ հասարակաց կարծեաց. այլ վասն
զի թէպէտ և ստոյգ է թէ տապանակիր լեռն Արարատեան երկրին

1 Que l'on est fier quand on met le pied pour la première fois sur cette sainte montagne, et que l'on entende de tous parts la tradition des habitants vous reporter sur les traces de Noë! Dès que vous avez monté quelque temps, vous y êtes déjà. — DUBOIS. III. 464

մէջ է, սակայն նոյնպէս որոշ չէ անոր զիրքն, այս պատճառաւ շատերն կը համարին թի կորդուաց քան թէ Մասեաց կողմերն է տապանակիր լեռն, և այս կարծիքն ունին հինք և մեր արգոյ նախնիք, յորոց ոչ որ¹, սկսեալ 'ի Բուզանդայ (որ Ս. Յակովբայ ծանօթ ելքն և նոյեան տապանին փնտռելը կը պատմէ) կ'ըսէ թէ Մասինն է այն, այլ Սարարագ 'ի կորդուս², Թուր թէ միջին դարուց մէջ մտած ըլլայ Մասիսի տապանակիր ըլլալուն կարծիքն, ինչպէս որ Լուսաւորչի շարականին քաջերգ հեղինակն, Երզնկացիէն կամ³ այլ որ կ'ականարկէ զայն գովելով Սրբոյն հանգստարանին լեռը. « Որ առաւել խորին խորհրդով խնդայ քան զԱրարարունսն յարմար Մասիք քանզի 'ի նմա հանգեաւ Ս. Գրիգորիոս տապանն ապրեցողիչ », և այլն, և հեղինակ մի Յայսմաուրթաց. « Նստաւ տապանն ի լեռինն Արարագայ, որ է Աշագ Մասիս. և այն գովուածիւն և պարմանք է ազգիս Հայոց և աշխարհիս մերոյ »: Ուստի աւելորդ կը համարինք այս նիւթիս վրայ երկար խօսիլ, և բաւական է և կարեւոր յիշել թէ մերայնց և թէ օտարաց տուած անուններն այս լեռան. նախ՝ առաջին և բնիկ անունն է՝ ՄԱՍԻՍ կամ ՄԱՍԻՍՈՒ ՍԱՐ՝ ըստ նորոց, իսկ ըստ նախնեաց օտվորաբար յոգնակի ՄԱՍԻ: Շատ օտար բան կ'երևնայ պատմութեան աւանդական հատուածն՝ իբր թէ Մասիք կոչուած է յանուն Մարսիկայ ընդոծնին Արրահամու, որ նահապետին մահուը նէն ետքը 'ի Հայս եկեր է: Կարծեմ թէ այս անունս բնական բան մի կը նշանակէ³, թերևս բարձրութիւն, վասն զի ոչ միայն ի Հայս կայ ուրիշ Մասիք ալ (որ որչառելու համար ասկէ Բզնունեաց աւուումը կը կոչուի, և է սրածայրն Սիփան վանայ ծովուն Հիւսիս-Արևմտեան կողմը), այլ և ոչ հեռի մեր հարաւային սահմաններէն լեռանց պարն Մասիոս⁴ կը կոչուի հնագոյն օտարազգի մատենագիրներէն, զոր Սարարոն կը կարծէր թէ Հայաստանի մէջ է: — Նախ

1. Եթէ այս կարծիքս հին և հեթանոսական ժամանակներէն 'ի վեր ըլլար, պատշաճ կարծեմ որ Լուսաւորիչ՝ լեռանս գրեթէ ստորոտն քարոզելով նորահաւաս ժողովուրդեան՝ այս լեռը վկայ ցուցնէր՝ շրջեղէղի վրայ խօսելու ատեն:

2. Ի Ճառքնտիրս՝ Մծբնացոյն վարուց պատմութեան մէջ նոյն գէպըը յառաջ բերուելով՝ կ'ըսուի թէ այն ժամանակներն տապանակիր լեռան վրայ տարակոյս կար, վասն զի ոմանք զԿորդուս, այլք զՄասիս կը համարէին, բայց ուրիշ ճառքնտրաց մէջ անխտիր կերպով Մասիս կը կոչուի Սրբոյն ելած լեռը:

3. Երբեքն կը համարի թէ Հայք այսպէս կոչեր են զՄասիս՝ յանուն Մասայ կամ Մոսորայ որդւոյ Արամայ, որ 'ի Սեմայ է և ոչ 'ի Յաբեթէ: Իսկ Պարսիկք, կ'ըսէ, Աղիզ բառէն կ'ստուգարանեն զայն, իբրև անուագոյն և գերագոյն բան մի իւր նմանեաց մէջ: Գերմանացի բանասէր մ'ալ Մազու բառէն յառաջ եկած կը համարի զայն, որ կազնի ըսէ է:

4. Հիւսիսային Միջագետաց մէջ, որ հիմա Գարսիս տաղլար կը կոչուի, նոյնպէս նաև Սնճար լեռանց մաս մ'ալ:

նարար տեսանք որ մեր հեթանոս նախնիքն զՄասիս միշտ ԱՅՍ մակ-
գրիւ կը կոչէին, որ թուի թէ պարսիկ լեզուին Եսպարտ կամ Իգէդ
բառին կը համաձայնի, նշանակ լերան սրբութեան և զիւցական ը-
լալուն, ինչպէս որ զանգրիկ լեզուի մէջ կովկասու բարձր լեռը Պէր-
էզարտ կ'անուանէր, յորմէ և այժմեան Էլչարուզ կամ Էլչարուզ. և
Հայոց ամսոց անուանց նուիրական օրերէն մին ալ (ժԸ օրն) Մասիս
կը կոչուէր :

Սմենայն հեթանոս ազգաց մէջ սովորական բան էր բարձր լերանց
պաշտօնատարութիւնն, և ըստ այնմ մերիններն ալ զՄասիս բնակու-
թիւն ֆալաց ոգւոց կը համարին, Յայտնի է թէ շատ առասպելներ
կը պատմուէին այս տեղոյս վրայ առաջին մեր նախնիքներէն, և
թերևս անոնցմէ է Պլուտարքոսի մի քանի փոփոխութեամբ պատ-
մածն 'ի ճառին որ Յաղազս Գետոց, որ յիրաւի այլանդակ պատմու-
թիւն մ'է. իբր թէ Երասխայ քով Տիորպիս քարալեռն ըլլար, որ
Մթաթափանց կը թարգմանուի, և զիրենք ալ որ մերայինք կը կո-
չէին ևս զՄասիս ՄԹԻՆ ԼԵԱՌՆ, որ յետոյ թուիս կամ Սեւս ալ ըսուե-
ցաւ, ինչպէս որ մինչև հիմա Մոռք աշխարհ կ'անուանեն զՄասիս
այն կողմանց բնակիչքն : Կարելի է ևս այս պլուտարքեան անունը ա-
ծանցել աւարի հայկական բառէն, վասն զի առասպել մի կը պատ-
մէ Պլուտարքոս՝ թէ Միհր ատրիանօր բեզնաւորեալ՝ համանուն որդի
մը ծներ է, երկրաճիւն մականուանեալ : Գարձեալ նոյն Պլուտարքոս
կը յաւելու թէ այս լերան վրայ կը բուսնի Արաքսու ծաղիկն, որ իբ-
րև թէ բնակչաց լեզուով կոչուանալս նշանակէ, այնպէս որ եթէ
կոյս մը մօտենայ անոր՝ ծաղկէն արիւն կը վազէր, և այն կը թառա-
մէր : Մեր նախնիք միշտ յարնր կ'անուանեն Մասիս լեռը, ինչպէս
որ հասակին և մեծութեանն ալ կը յարմարի :

Շարունակելի

